



N 8
22 Արմավիրի մարզ, Արաքսի գյուղական համայնք,
Հասցե՝ Դրոյի 2, հեռ.՝ (098)74-75-49, էլ. փոստ՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am

«21» հունվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի հունվարի 12-ին կայացած ժողովի հաշվետվությունը 2014 թվականի կիսամյակային ծավալված գործունեության վերաբերյալ:

Արաքս համայնքի
ղեկավար՝



/ Ա. Միքայելյան

ՀԱՃԱԼԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Արարս /Էջմ./ համայնքի ղեկավարի 2014թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ:

Հարգելի համայնքի քնակիչներ և պարոն Ա. Այվազյան, թույլ տվե՛ք Ձեր ուշադրությանը ներկայացնել Արարս համայնքի ղեկավարի, տվագանու և գյուղապետարանի աշխատակազմի 2014թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած հատվածում կատարված աշխատանքների և միջոցառումների ամփոփիչ տեղեկատվությունը:

Արարսի գյուղապետարանը իր գործունեությունը իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն: Մեր համայնքը ունի 530 տնտեսություն, քնակչությունը՝ 2052 մարդ, մոտ 1302 ընտրող, 1290 հա հողատարածություն, որից ոռոգվող 682 հա հողատարածք: 2013 թվականին մշակվել է շուրջ 207.6 հա հողատարածքներ, անգյալ տարվա համեմատությամբ 5 հա ավել: Գյուղում մշակվում են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ:

Ըստ քնագավառների կատարվել են

Ֆինանսական քնագավառում

Կազմակերպվել է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման աշխատանքները: Նախատեսված 7500.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 7890.1 հազար դրամ սնվական եկամուտ, այսինքն ապահովել ենք սնվական եկամուտների հավաքագրման 105.2 տոկոս կատարողական:

Գյուղապետարանը աշխատավարձի և եկամտային հարկի պարտքեր չունի:

Համայնքի հաշվի համարին կուտակվել է 3620.2 հազար դրամ գումար, որը նախատեսված է ծախսել համայնքի հիմնախնդիրների լուծման վրա:

Կրթության, մշակույթի և նրիտասարդության հետ տարված աշխատանքների քնագավառում

Համայնքում գործում է պարի խմբակ, խմբավում կան 25 աշակերտներ:

Պաշտպանության քնագավառում

Կազմակերպվել է զինապարտների հաշվառման, նրանց բուժզննման աշխատանքները: Ուժեղացվել է կապը զինկոմի հետ, կազմակերպվել է զորահավաքի աշխատանքներ:

Հաճախակի կազմակերպվում են հանդիպումներ համայնքի քնակիչների և սահմանապահ ուղեկալների հրամանատարության միջև:

Սոցիալական ծառայության բնագավառում

Ամանօրյա միջոցառում կազմակերպելու համար նախատեսվել է 110000 (մեկ հարյուր տասն հազար) դրամ:

Աջակցություն է գույքաքննվել անապահով ընտանիքներին: Թվով 23 անապահով ընտանիքների տրվել են դրամական օգնություն՝ ընդամենը 3143.0 հազար դրամի չափով:

Համայնքի բնակչությունից թվով տասնչորս մահացածների համար գնվել են ծաղկեպսակներ՝ ընդհանուր գումարով 389.0 հազար դրամի չափով:

Սահմանազատ հիմունքների օրվա՝ մայիսի 28-ի կապակցությամբ համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 2 ուղեկայների համար գնվել են նվերներ ընդհանուր գումարով 140000 (մեկ հարյուր քառասուն հազար) դրամի:

Ամանօրի առթիվ նվերներ նախակրթարանի սաներին և Արարսի միջնակարգ ՊՈԱԿ-ին տրամադրվել են նվերներ 147000 (մեկ հարյուր քառասունյոթ հազար) դրամ:

Գյուղատնտեսության բնագավառում

Կազմակերպվել են աշնանացան, պարարտագման և ոռոգման աշխատանքներ և պնտության կողմից տրված պարարտանյութը բաշխվել է համայնքի բնակիչներին: Մկսել ենք ոռոգման նպատակով արտնվյալ հորերի հորատման աշխատանքներ:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Համայնքի բյուջեի հաշվին կատարվել է աղբահանություն՝ շուրջ 120.0 հա բնակավայրի տարածքից, որի համար համայնքի բյուջեից ծախսվել է 1032.0 հազար դրամ գումար:

Համայնքի հիմնախնդիրներ

Համայնքի հիմնախնդիրները այսօր էլ մնում են.

1. Ոռոգման ջրի անբավարարությունը,
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը,
3. Դպրոցի և մշակույթի տան վերանորոգումը:
4. Ներհամայնքային ճանապարհների նորոգում:

Արարս համայնքի ղեկավար՝



/ Ա. Միրանյան